ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 233 – Ա

«ԿԱՊԱՆԻ ԱԼ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշման հավելվածը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթն անցկացնելու համար հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ նշանակել մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմինե Ավագյանին:
3. Հանձնաժողովի քարտուղար նշանակել մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Նոննա Բաղդասարյանին:

13.05.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀՀ Սյունիքի մարզպետին
փոխարինող

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2026թ. մայիսի 13
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2026թ. մայիսի 13-ի
N 133 -Ա որոշման

ԿԱԶՄ

«Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի անցկացման հանձնաժողովի

Արմինե Ավագյան	Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,
Արփինե Բաղդասարյան	Իրավաբանական բաժնի պետ,
Մարինե Աբգարյան	Ֆինանսական վարչության պետ,
Սուսաննա Հակոբյան	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,
Թամարա Կարապետյան	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ,
Քրիստինե Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ,
Ներսես Խառատյան	«Դեպի լավ ապագա» ԵԿ ՀԿ անդամ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ